


633.76
891



ԱՐՄԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՈԱՆԻԱ



ԾԽԱԽՈՇԻ ՄԵՎԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱԶՄԵՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ'

ԽԵԿ. Կ. ՄԵԼԻՔ-ՋԱԿՆԱԶԱՐՅԱՆ

633.7

Ա-50

ՊԵՏՐՈՎ
ՅԵՐԵՎԱՆ

1·9·3·1

33.7

-50

ՀԱՅՈՅ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԱՏ

30 JUL 2010

ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԵՎԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 18 (109)

ԵԽԱԽՈՏԻ
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱԶՄԵՅ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒ
Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՏԵՐԵՎ. 1984

27.06.2013

19.393

ՊԵՏՉՐԱՏԻ ՏԿԱՐԱՆ 1495
ՊԱՏՎԵՐ 141
ԳՐԱԿԱՐԱՎՈՐ 6148 (բ)
ՏԻՐԱԺ 6000



43567.63

ԾԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասում մշակվող ծխախոտի գլուխավոր տեսակներ են՝ տրապիզոն, սամսոն, գյուրեկ, բաֆրա և այլն, վորոնք թե ներքին և թե արտաքին շուկայում մեծ արժեք ունեն և առաջնակարգ տեղն են բռնում:

Ծխախոտի մշակությամբ պարագող կուխողները, արտելները կամ այլ հիմնարկությունները պետք են աչքի առաջ ունենան շըրջանի հողային և կլիմայական պայմանները: Նոր տեսակ սերմ ցանելուց զգույշ պիտի լինել. փոքր տարածության վրա մի յերկու տարի փորձ անելուց և հաջողությունը տեսնելուց հետո ընդարձակ տեղ տալ:

Ծխախոտի տեսակը բնորելիս, պետք է աչքի առաջ ունենալ և շուկայի պահանջը, ծխախոտի արժեքը, վորը կախումն ունի նրա գույնից, լավ ու համահավասար վառելուց քիչ և սպիտակ մոխիր թողնելու հատկությունից և նրա արոմատից (հոտավետությունից):

Բարձր գնանոց լավ ծխախոտը ստացվում է լավ մշակված հողերում, վորտեղ ամառվա

միջին տաքությունը 25 աստիճանից պակաս չէ: Ծխախոտը լավ աճում և զարգանում ե այն չեղերում, վորտեղ հասունանում են խաղողը, տեղերում, բամբակը, այն ե՛ ծովի մայեղիպացորենը, բամբակը, այն ե՛ ծովի մայեղելութից մինչեւ 4000 վոտնաչափ բարձրություն ունեցող վայրերը:

1. Ի՞նչպիսի հողեր են պետք ծխախոտի մշակության համար:

Թեև ծխախոտը կարող ե աճել ամեն մի տեսակ հողի մեջ, բայց ամեն մի հող ընդունակ չէ նրան այն հատկությունները տալու, վորոնք պահանջվում են նրանից: Դրա համար ել պետք ե ընտրել այնպիսի տեղ, վորը հարժար լինի հողի կազմով, իր տեսքով ե վոր գըշտավորն ե ապահովված լինի ջրով:

Բարձր տեսակի ծխախոտ ստանալու համար, օրենք ե աչքի առաջ ունենալ հողերի այսու այն հատկությունը:

Ա. ավազախառն հողերը, վոր խառն են լինում սևահողի, բուսահողի, կավի, կրի, մանր քարերի հետ և կազմում են հողի $\frac{1}{3} - \frac{1}{2}$ մասը, քարանք իրենց փխրուն լինելովը թե շատ ջուր են դրանք ծծում, թե ավելորդ ջուրը զոլորշիացնում: Այլ օլիսի հողերում ստացվում ե միջակ մեծությամբ, բարակ և յուղոտ տերևներ, բաց մեծությամբ, բարակ և յուղոտ տերևներ, բաց դեղնագույն դույնով և լավ արամատով: Այդպիսի հողերում բարձր ծխախոտի ծխելու պիսի հողերում բարձր ծխախոտը ծխելուց մերժակ կամ բաց դրոշակույն մոխիր ե տալիս:

Եթե ավազախառն հողի մեջ կավը, բուսականը պիս ե, նու վիրուն լինելով, խռնախռությունը լինի մեջ կավը վայրեւածույն մոխիր ե տալիս:

Թյան պակասությունից չորանում ե և նրա վերի շերտի ավազը օտարիներից քվարելով, տերեները կտրատվում են կամ փոշով ծածկվում: Այդպիսի հողերը պետք ե օտարիներից պաշտպանվեն ու ջրի կողմից ել ապահովված լինեն:

Բ. Սևահողակավային հողերը ծանր են, նրանցում ծխախոտը աճում և զորեղ կերպով, տերեները լինում են խոշոր և հաստ ջղերով: բույսը ուշ ե հասնում և տալիս ե մեծ բերք, բայց ծխախոտը ստացվում ե կոպիտ և այն վոչ լավ համ ու հոտով: յեթե սկզբում նա ունեցեն և գեղին կամ բաց կարմիր գույն, հետո նա կորցնում ե, կարմիր կամ դարչինի գույն ստանում:

Գ. Կավային հողերում ծխախոտը լավ ե բանում և աճում, բայց իր հատկությունով ստոր ե ավազախառն և ավազասևահողերում բանող ծխախոտից: Ծանր կավային հողերի պակասությունը նրա մեջն ե, վոր յերկար ժամանակ իր մեջ պահում և ծխախոտի համար ավելորդ խոնավությունը և յերբ չորանում ե, շատ գժվարությամբ և անձրեսաջուրը ներս թափանցում և բույսի արմատները նրանից չեն ողտվում, մանավանդ քամիների ժամանակի և տաք յեղանակին, յերբ ջուրը խորը չանցած շուտով դոլորշիանում ե, բացի այդ, կավային հողերը կպչուն են դառնում ջրելուց և անձրեներից թրջվելուց, չորանալուց գժվարացնում են մթիլի փոխադրելը, փոցխելը, բուկը լրջ-

Առաջին մոլորդը կատարելու պահպանից աշխատանքներ -
բոր:

Դ. Թոլորավիճ անպիսիք են և անձեռնտու-
ժիսախոտի մշակության համար այն Հողերը,
վորոնք ընկած են խոր, ցածաղիք տեղերում,
գետերի, լճերի յեզերքին և աղացին (ջրա-
քյութ) են, թեկուզ այդ Հողերը լավ հատկու-
թյուն ունենան:

Ե. ՏԵՂԻ ԵՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծխախոտի ընտիր տեսակների մշակու-
թյան համար պիտի ընտրել քիչ պարագա-
փուխը հողեր։ Չատ ծանր կավացին, ինչպես
և ավազացին կամ քրեճոտ հողերն անպիտք են
ծխախոտի համար։ Ծանր կավացին հողերից
ստացված ծխախոտը վատ է ծախվում, ավա-
զացին հողերից չնչին բերք է ստացվում։

Ծխաբոտի տեղը քամ իներից պաշտպան-
ված և արեաՀայաց պետք է լինի: Սաստիկ քա-
միներից տերեները ճոթուում են, իսկ շվաք
տեղերում ուշ են զարդանում և կանաչ մնում:

Զառիվայր տեղերում ծխախոտ մշակելուց
պետք է զգուշանալ վոր շատ թեքություն չու-
նենան, վորովհետեւ ամառը հեղհեղների ժա-
մանակ կարող է ծխախոտի մի մասը քերմիել
տարվել, յեթե պաշպանված վիճի: Լավ զա-
ռիվայր և համարվում ծխախոտի համար դեպ
հարավ ընկածը, հետո արևմտյան և արևելյան
կողմն ընկած թեքությունները: Այդ զառիվայ-

բերը արևից լավ տաքանում են և ծխախոռն
նրանց վրա լավ հասունանում են:

Պետք ե խույս տալ հյուսիսային կողմ ընկած զառիվայրերից, վորովհեսն նրանց վրա ծխախոտի ամելությունը գանգաղ և զնում, վորի պատճառով ծխախոտը կարող ե աշխանային ցրտերին յենթարկվել և իր լավ վորակը կորցնել:

Հարթ տեղին ըստ, դանքատեսվի շուրջը,
ոինք և առունեց, ակոսներ բանալ, վոր ջրեր
չկանգնեն:

2. ՑԱՆՔԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ծխախոտը չի կարելի մի քանի տարի
շարունակ միևնույն տեղում մշակել, դրանից
ուժասպառ ե լինում հողը, մնունդի պակասու-
թյունից վատորակ բերք և ստացվում: Հողի
պարագատաշնելը, ճիշտ և, ծխախոտի բերքը
չառացնում ե, բայց նա առաջվա լավ հատ-
կությունները լիովին չի պահում: Ներկա
պայմաններում, յերբ ծխախոտի մշակությու-
նը կոլխոզների ձեռքն և անցել, ցանքափոխու-
թյան վրա պետք ե ուշադրություն դարձնել և
ծխախոտին իբրև թանգարժեք բույսի, բամ-
բակից հետո առաջնակարգ տեղը տայ:

Ծխախոտը լավ և խոտաբույսերից հետո
շանել, կարելի յե հացարույսերից հետո շանել:
Ուժասպառ հողերում ծխախոտը կարելի և ցա-
նել լորետեսակ բույսերի ցանքից հետո խամ-
մնացած տեղում:

Յ. ՀՈՂԻ ՀԵՐԿԵ

Ծխախոտի մշակության համար հողի պատրաստությունը առաջին եական գրծողությունն է:

Ծխախոտի համար աշնանը հողը 5-6 վերշոկ խոր պիտի հերկել պարարտացնելու դեպքում մոտ 3 վերշոկ խոր գոմաղբը հողի տակ մայնել, մի հեկտարին 1200 փութ և թողնել մինչեւ դարնան: Յեթև հողը աշնանը հերկված է, բավական և գարնանը բազմախոնանի դութանով նորից յերեսանց հերկել, փոցինել և նրա վրա սածիլը (շիթիլը) փոխադրել:

Յեթև ծխախոտի ցանքատեղում հաջորդ տարին ել պետք և նորից ծխախոտ ցանչի, ամենից առաջ պետք և տերեւը քաղելուց հետո, ծխախոտի ցողունները հավաքել հետո 3-4 վերշոկ խոր հերկել: Գարնանը շիթիլը փոխադրելուց մի ամիս կամ 2 շաբաթ առաջ հողը յերկրորդ անգամ հերկում են ու փոցինում: Յեթև հողը խճոտ է, մանր քարերով, թույլ բերք և ստացվում:

4. ՄԽԱԽՈՏԻ ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՔԱՆԱԿԸ

Աւճաւապառ հողերը պարարտացնում են թե գրգանական պարարտացուցիչ նյութերով և թե հանքային:

Որդանական պարարտացուցիչ նյութերն են՝ գոմաղբը, բուսահողը, կոմպոսը, լորիածաղիկ բույսերը, վիկան և այլ խոտեղենը:

Ծխախոտի ցանքատեղը պարարտացնելու

համար պետք և դորժագրել վոչ թէ թարժ գոմաղբը, այլ հնացածը, քայքայմածը, թարժ գոմաղբով առաջին տարին պետք է պարարտացնել հացաբույսերը և հետո միայն ծխախոտին տեղ տալ, թարժ գոմաղբից ծխախոտը դորեղ թվեր և ձգում, բայց դրանից կարող է նրա հատկությունը վատանալ:

Որդանական պարարտացուցիչ նյութերը ոգտակար են վոչ միայն իրենց սննդառու նյութերով, այլև նրանով, վոր հողի մեջի բուսահողը շատանում և և դրա հետևանքով նրան լավացնում, հողը վերականգնում և իր պտղատը վությունը, նա լավ պահում և խոնավությունը, վորով ծխախոտը թէ լավ և աճում և թե չորության դիմանում:

Մի հեկտար տեղին կարելի է տալ 18 տոնն և ավելի (1200 փութ) գոմաղբ: Գոմաղբով պարարտացնելը, յեթև նա հնացած է, չի վնասում ծխախոտի հատկությանը, այլ ընդհակարակն, լավացնում և նրան: Մեծ քանակությամբ գոմաղբ մտցնելը նույնպես վնասում և ծխախոտի հատկությանը, ինչպես շատ բորակ և ուրիշ ազդացյին պարարտացուցիչ նյութեր մտցնելուց:

Այն շրջաններում, վորոեղ վոչխարի, այծերի հոտեր կան, կարելի յէ ոգտվել և նրանց աղբով:

Մնդառու նյութերից ծխախոտի, ինչպես և մյուս բույսերի համար կարեոր և վոր հողը ունենա ֆուֆոր, ազուր և կալի: Ֆուֆոր ունե-

Կող հանքային պարաբռացուցիչ նյութերից գործադրվում և սուպերֆոսֆատը, թումազը-լաքը, իսկ ազոտային նյութերից՝ կիրաղոտը, բորակը և ծծմբաթթվային ամմոնին, կալիա-կանից—ծծմբաթթվային կալին: Բայց ամենից զգալի յելինում ծխախոտի համար հողի մեջ ֆոսֆորի և ազոտի պակասությունը: Ֆոս-ֆորային պարաբռացուցիչ նյութերը, յեթե շափից ավելի են լինում հողի մեջ, ծխախոտին չեն վնասում, այնինչ ազոտային նյութերը շափից ավելի լինելուց, ծխախոտը վնասում է նրանով, վոր նա շատ զորեղ աճելություն և աճենում ի վնաս իր հատկության: Այդ յեր-կու նյութերի՝ ֆոսֆորի և ազոտի պակասու-թյունից բերքը փշանում է: Ինչ վերաբերում է կալիին, շատ դեպքերում հողի մեջ նա բա-վական քանակությամբ է լինում, ֆոսֆորա-յին և ազոտային պարաբռացուցիչ նյութերի հետ խառնելով նա լավացնում է ծխախոտի հատկությունը և նպաստում ծխելուց նրա հեշտ վառվելուն: Հողի մեջ շուտ կալին ծխախոտին վնաս է տալիս:

Ի՞նչ բանակությամբ հանքային պարա-բռայութ տալ: Մի գեսայատին տեղին (1,1 հեկ-տարին) տալիս են 1, սուպերֆոսֆատ մինչև 20 գույթ (337 կիլո) և 2, կիրաղոտ և ծծմբա-բռ-վային ամմոնին՝ 5-6-ական գույթ (80-100 կիլո):

5. ՍԵՐՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԻ ԴԵՍՅԱՏԻՆ ՏԵՂԻ ՎՐԱ ՇԻԹԻՆԵՐԻ ՑԵՎ ՍԵՐՍԻ ՔԱՆԱԿԸ

Ինչպես ամեն մի բույսի սերմ, այսպես ել ծը-խախոտինը, մի քանի տարի շարունակ սերմե-լուց հետո փոխում է իր հատկությունը և դնա-լով վատանում: Այդ պատճառով ամեն տարի պիտի ընտրություն անել, թփի վրայի տուածին ծաղկիները թողնել մինչև նրանց լավ հա-սունանալը և հետո հավաքել, քսակի մեջ ածել չոր, և մկներից ազատ տեղում պահել: Ցանե-լու համար պիտի գործածել վոչ հին քան 3-4 տարվա սերմ:

Մի դեսայատին (1 հեկտ.) տեղի վրա չորս վերշոկ թուփը թփից հեռու և շարքը շարքից 12 վերշոկ, ծխախոտ ցանելու համար կհարկա-վորվի 110,000 շիթիլ: Խոշոր տերեներ ունեցող տեսակները-սամոն, տրապիզոն հեռու-հեռու պիտի ցանել, իսկ մանրերը՝ մոտ-մոտ: Կրիմում գյուրեկի շիթիները ցանքատեղում տնկում են մի հեկտարի վրա 200,000 հատ, տրապիզոնին տեղ են տալիս մինչև 50,000 շիթիլ, իսկ սամ-սոնին՝ 60—80,000 հատ:

Շիթիլանոցում մի քառակուսի սաժեն (4 ½ քառ. մետր) տեղում ցանում են 90 %-ը ծիլ տվող լավ սերմ 1 զոլտնիկ (4 զրամ), կամ մի թեյի գղալ: 110,000 շիթիլ ստանալու համար պետք է տաք կամ կիսատաք ջերմանոցը 10 քա-ռակուսի սաժեն (45-57 մետր) տարածություն ունենա:

Սերմը խիստ շպեսաք և ցանել, դրանից շիրքը յենթարկվում է զանազան հիվանդությունների և իշխանությամբ։ Սերմը ցանում են չար կամ առաջուց թրջած ծիեցրած տեսքով։

Չոր սերմով ցանելու առավելությունը նրա մեջն է, վոր ավելի դիմացկուն և զանազան պատահարների դեմ քանի ծլեցրած սերմը, միակ պակասությունը նրա մեջն է, վոր 7-10 որ առաջ պետք է ցանել, քանի վոր մոլախոտերը շուտ են յերեւում, քանի ծխախոտի գուրս դալը։

Սերմը ծլեցնելու համար թրջում են և ֆըլանելի, կամ ուրիշ նորու կտորից շինած տոպրակի մեջ ածում, գոլ ջրի մեջ մի քանի անգամ կոխում, հանում և տաք տեղում պահում։ Որական 2—3 անգամ սերմո շուռ են տուլիս և յեթե առարակը չորացել է, նորից թրջում են։ Չոր հինգ որից սերմը ուռչում է, ճերմակ ծիր դուրս գցում։ Ահա արդ ժամանակ տուանց հետաձգելու պետք է շիթիլանոցում շադ տալ։ Սերմը ձկում են մարտի կեսից, վոր մայիսին շիթիլը պատրաստ լինի։

6. ՄԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼԱՆՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՏԵՂԸ

Ծխախոտի մշակության ժամանակ շիթիլանոց ունենալը անհրաժեշտ է, վորպեսզի շիթիլները ցանքատեղ փոխադրելուց հավասար զարգացած լինեն, առողջ և միատեսակ։

Շիթիլանոցի տեղը պետք է արելից յուցու և տաքություն ստանա ամբողջ որը. նա պետք է պաշտպանված լինի մանավանդ Հյուսիսային։

Յուրա քամիներից և ջրելու կողմից ապահովված։ Յանկայի յե շիթիլանոցը աղբակույտեց, գամողրից հեռու լինի, վորոնց տակը արջուուկը (իշխառառնջը) բռն և զնում, բաղմանում և շիթիլներին վնաս տալիս։

Ո. Հայրաստանում շիթիլանոցի համար կարելի յե պտուրաստել հասարակ կիսատաք ներմունիք։ Դրա համար հողը փորում են Ա. շվեշոկ (20 սանտ.) խորը փոսեր շինում, նրա մեջ լցնում են առաջուց թրջած ծղու, ձիու աղբի հետ խառնած, վոտով կոխ տալիս, ծխուի վրացից 2 ու կես վերշոկ (10 սանտ.) սովորուկան հող ածում, տրոբում, հին փոտած գոմաղբով պարագայնում և դրա վրացից ել 1 վերշոկ բուսահող ավելացնում՝ ավաղի հետ խառնուի։ Ճերմոցների լայնությունը սովորաբար լինում է 1¼—2¼ արշին (90-160 սանտիմետր), իսկ յերկայնությունը 7-12 արշին ավելի, նայած տեղի հարմարության։

Ճերմոցների կողքերին կարև ցիցել են անկում, պատերի բարձրությամբ տախտակով համ զամբիշով հյուսում, ցցերի վրա թելկատներ պնդացնում պատկան օրջանակներ լինելու համար կամ փողոցներով ծածկելու։ Շիթիլները ըստ յերկայնության, պետք և ուղղություն տալ արեվիլքից դեպի արիվմուտք. Հյուսիսային պատը հարավային պատից քիչ բարձր լինի, վոր ծածկոցը թեք դիրք ունենա ոնձքեալաջին հոսանք տալու։

Յուրա ճերմոցները կիսատաք շերմոցնե-

ըից առարքերվում են նրանով, վոր տաքացնելու համար ծղոտ կամ գոմաղբ չեն գործադրությունում. ոգտվում են միայն արևի տաքությունից, այդպիսի շիթիլանոցները վաղահաս շիթիլ ստանալու համար քիչ հուսալի յեն քան կիսատաքը: Ավելի քիչ հուսալի յեն հասարակածուները, առանց վորեւ պատերի:

Կիսատաք շիթիլանոցի ապակյա շրջանակը լինում է մի սաժեն յերկայն (213 սանտ.) և $\frac{1}{2}$ սաժեն (106 սանտ.) լայն: Ապակյա շրջանակներով ծածկոց չունենալու դեպքում, ջերմոցները գիշերը ծածկելու և ցերեկը սաստիկ շրտերից պաշտպանելու համար դործ են ածում ծղոտից կամ դամիշից գործած փողոցներ, խսիրներ:

7. ՍԵՐՄԻ ՑԱՆԿԸ ՑԵՎ ՇԻԹԻԼԱՆՈՑԻ ԽՆԱՋՔԸ

Սերմը ցանում են շիթիլանոցում. յերբ նկատում են, վոր միջի հողը սկսել է տաքանալ նրան փիրացնում են, նորից սևահող կամ բուսահող շաղ տալիս, հավասարեցնում, ջրում և սերմի մեկին 15 ավագ խառնած, շաղ տալիս, հետո խախալով կես մատնաչափ հաստությամբ պարարտ սևահող մաղում վըան, թիակով խփելով պնդացնում, ցնցուղով ջրում, վոր սերմը լավ կաչի հողին և նպաստի շուտ ծլելուն:

Ծխախոտի սերմը բարեհաջող պայմանակրում ծլում է 10—15 որից, յերբ չոր և ցանքած, իսկ թրջած ու ծիլ արձակած սերմերը 7—10 որում:

Մինչև սերմի ծիլ արձակելը գետնի յերեսը գուրս գալը պետք է ամեն որ ցընձուղով թեթև ջրել, մինչև հինգերորդ որը, առավոտները և յերեկոները, իսկ դրանից հետո միայն յերեկոները, արեւ մայր մտնելու ժամանակ: Ամպամած և անձրև որերին չպետք ե ջրելը: Շիթիլը քիչ բարձրանալուց ջրել պետք է 3—4 որը մեկ անգամ, նայած պահանջին:

Սերմը յեթե խիտ է ցանվել, շիթիլը լով չի աճի, կդեղնանա ու նիշար կմնա, պետք է սերմակացնել, հողը միշտ փուխը պահել և մուխախոտերը զգուշությամբ միջիցը հանել:

Յեթե ցրտահարության վառագ չկա՝ շիթիլանոցի յերեսը չեն ծածկում, վոր բույսը վարժվի բաց ողի և դիմանա չորության:

8. ՇԻԹԻԼՆԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼԸ

Յերբ շիթիլները բարձրացել են, խիտ են, չերմանոցի մեջ յեղած սննդարար նյութերը բավական չեն լինում նրանց զարդացմանը, վորից սպրզնում, մինչև անգամ գեղնում են: Այդպիսի շիթիլները պարարտացնելու կարիք ունեն:

Պարարտացնելու համար վերցնում են փուծ գոմաղբ, կամ բուսահող, խախալի միջոցով շաղ են տալիս շիթիլների, վրա և հետո ջրում: Մի անգամ ջրելուց հետո պետք է յերկրորդ անգամը ևս մաքուր ջուր սրսկել: Շիթիլները պարարտացնում են և հանքային աղերի լուծույթով, այն և $\frac{1}{8}$ ֆունտը



(51 գրամ) մի վեգոր ջրին: Մի դույլ
այդպիսի լուծույթը գործադրում էն 1 քա-
ռակուսի սաժեն (4½ քառ. մետր) տեղի վրա:
Բորակի հետ լավ է և սուպերֆոսֆատի լու-
ծույթով պարարտացնելը նույն թնդությամբ
սրսկման ժամանակ պետք է լուծույթը խառ-
նել, վոր սրսկիչի տակը չնոտի:

9. ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼԱՆՈՑԻ ՎՆՍՍԱՏՈՒՆԵՐԸ

Շիթիլանոցին մեծ վնաս են տալիս ջեր-
մոցներում բուն դրած մկները, գորտերը,
բայց ավելի շատ արջնուկը:

Մկները տաք գոմազը մեջ մտնելով ծո-
կեր են բանում և հողը շուր տալիս շիթիլների
Հետ:

Գորտերը մտնում են շիթիլանոցը արելց
փախուստ տալով, նույնպես ծակեր են բանում
և քանդուսում շիթիլները: Մկների դեմ պետք
է մկնղեղ ածել ծակերը, իսկ գորտերին Հա-
գաքել, հեռացնել:

Արջնուկը շիթիլանոցը մտնելով, ծակում
է հողը և նրա մջ բնակվում, շիթիլների ար-
մատների տակ ճանապարհներ բանալով բարձ-
րացնում է հողը, շիթիլները տեղահան անում,
վորից նրանք թառամում են:

Արջնուկի առաջն առնելու համար, մի
փութ յեղիպտացորենի ձավարին (կարելի յե-
և յորենի և բբնձի) խառնում են 1—2 Փունք
մկնղեղ, ջրի մեջ խաչում, խմոր են շինում
մոտ յերկու որ պահում, վոր նա թթվի, ավելի
գրավիչ լինի արջնուկի համար, ապա այդ խմո-

րից սիսեռի մեծությամբ գնդակներ են պատ-
րաստում և յերեկոներին արջնուկի բացած ճա-
նապարհների մեջ ձգում. գրանից նրանք թու-
նավորվում են, վազում դեպի ջրերը և խմելով
ստուկում: Բացի մկնղեղը, լավ հետեւնք և
ստացվում և Փարիզի կանաչով արջնուկի դեմ
կռվելը: Դրա համար վերցնում են յերեք մաս
ցորենի ալյուր, մի մաս Փարիզի կանաչին,
լավ խոռնում, վրան ջուր և մի քիչ արևածաղ-
կի ձեթ ածում, այնքան, վոր խմոր դառնա և
կարելի լինի նրանից սիսեռի մեծությամբ
գնդակներ շինել և շիթիլանոցում դնել:

Իսկ այս վնասատուների դեմ, վոր կրծում
են շիթիլի տերենները, վերցնում են մի զույլ
ջրին 15 գրամ Փարիզի կանաչ և 30 գրամ
չանդած կիր, վոր հանդցնում են և ջրի մեջ
բայց անում, հետո Փարիզի կանաչը հետը
խառնելով շիթիլներին սրսկում:

10. ՇԻԹԻԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Ծխախոսի շիթիլներին ամենից շատ վնա-
սում են I, շիթիլի փտությունը և II, արմատ-
ների փտությունը:

1. Շիթիլի փտությունը առաջանում է
հասարակ աչքով աննկատելի սնկային պարա-
գիտներից, վորոնց պետիում անունն են տվել: Այդ սունկը մեծ մասամբ գտնվում է զետնից
բարձր ծխախոտի ցողունի վրա և փտություն
առաջանում: Այդ հիվանդության նպաստում
և տաք և խոնավ յեղանակը, շիթիլի խիտ ցան-
քը, ջերմանոցի հողի շատ խոնավությունը:

Դրա առաջը կարելի յէ առնել բոլոր չիվանդ շիթիները հանելով, կրակ տալով և փրչացնելով. հիվանդ շիթիները հեռացնելուց հետո պետք ե ախտահանել, վարակը վոչնչացնել. դրա համար 1. ցանում են ծծմբափոշի 2. շիթիները հանած տեղերին պղնձարծառպ են տծում յերեք քառ. Փ. արջասպին 1 վեղբուջուր վերցրած. պետք ե աշխատել այդ լուծվածքը առողջ շիթիների վրա չընկնի, 3. յեթե այդ գեղերը ձեռքի տակ չինեն. կարելի յէ և հասարակ յեռացրած ջուր ածել:

Ա. Յերբ փառւթյունը առաջանում ե արմատներից, վորից շիթիլի տերեները ոկառմ են զեղնանալ և մեռած արմատների տեղը նոր առողջ արմատներ գուրս գալ զետնի յերեսին մոտ, պետք ե առանց ուշացնելու պղնձարծառպ սրսկել (25 դրամը մի վեղբուջի մեջ լուծած), վորից հետո մյուս որր վրան ծծմբափոշի ցանել:

Այդ հիվանդությունը ուժեղ դարձնում է հետեւյալ պայմաններում.

1. Յերբ հողը ծանր և ցուրտ կավային է:

2. Յերբ հողը պարաբռացնում էն չափից բուրս թռչունների ծերտով, կամ արտաքնօցի աղբով:

3. Յերբ չափազանց շատ ջուր են տալիս:

4. Յերբ յեղանակը ցուրտ ե և խոնավ, շիթիլը շատ խիտ ե ցանված, վորը արգելք ե լոյսի և հողի քամհար լինելուն:

5. Յերբ միևնույն տեղում, տարեցտարբ շերմանոցը գործադրության մեջ ե լինում:

11. ՅԵՐԲ ՊԵՏՔ Ե ՇԻԹԻԼԸ ՓՈԽԱԳՐԻՆԵԼ

Շիթիլը կարելի յէ փոխադրել, յերբ նրա ցողունը բարձրացել ե մոտ 2 վերշոկ և 4—6 ֆինչե 8 տերեներ ունի վրան: Այդ լինում և բույսը ցանելուց և կանաչելուց 40—50 որ հետո: Այդ հասակում շիթիլը թե լավ արմտու և բռնում ցանքատեղում և թե հեշտ անկվում:

Շիթիլը անդափոխելուց առաջ ցանքատեղը լավ հերկված, մոլախոտերից մաքրված պիտի լինի: Հողամասը պետք ե մասերի, տափառկների բաժանել. 8—10 սաժենից լայն չպիտի լինեն և 30—60 սաժենից յերկար: Տափառկների արանքներում սայլի և բանվորի անց ու կարծի համար ճանապարհներ պետք ե թողնել: Շարքերը ուղղված պիտի լինեն արեմուտքից արևելք, վոր թիթերը ավելի լույս տեսնեն և ջերմություն ստանան: Շիթիլը շիթելանոցից հանելուց առաջ, նախընթաց յերեկոյան պետք ե ջեկել, վոր հողը փափիկանա և շիթիլը հանելուց նրա մազմզուկները չկտրատվեն: Հանած շիթիլը արևի տակ չափափի թողնել, պիտի զամբյուղում դարսել և փաղ ուսուփառից մինչեւ կեսոր չոգերն ընկնելը գնել և շարունակել յերեկոյան հովին:

Տնկելու համար ցանքատեղի մի գլխից ֆինչե մյուսը քող են կապում և նրա ուղղությունը շարքը շարքից 1 արշին հեռու ակոսներ

բանում, դուրս յեկած հողից թմբելը շինուած, այդ թմբերի կողքին փոքրիկ ըիրով փոս բարյանում և նրա մեջ վիթիլը անկում, հողով ծածկում և շարքը վերջացնելուց հետո ցնձուղով ջրում, վոր հողը լավ նստի և արմատները փոսի մեջ պնդվեն:

12. ԻՆՉ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՇԵՑԻԼԸ ՏՆԿԵԼ

Շիթիլի ինիտ կամ նոոր (սեյրակ) տնկելը, նրանց մեկ-մեկից ունեցած հեռավորությունը շարքերում և թե շարքամեջերում, կոխում ունի զանազան պայմաններից, այն և՝ ծխախոտի հատկություննից:

Մեծատերեւ տեսակները, այն և՝ սաժամն, տրապիզոն, պլատանա, պետք և շարքը շարքից 12—16 վերշոկ (58—71 սանտ.) հեռու լինի, իսկ թուփը թփից շարքի մեջ 4—8 վերշոկ (18—36 սանտ.) :

Մանրատերեւները (գյուբեկ), ինչու ճնանկվում, այն և շարքը շարքից 6—8 վերշոկ (27—36 սանտ.), իսկ շարքամիջում 3—4 վերշոկ (13—18 սանտ.) :

Հողի վերաբերմամբ պետք և առել, վոր իննավ, վոչ շատ պարաբռ հողերում շիթից սեյրակ պիտի տնկել, իսկ չոր և պինդ հողերում, դաշտավայրերի սևահողում կամ անտառահերում մի քիչ խիտ: Զարիվայր տեղերում պետք և սեյրակ տնկել, քան հարթ տեղերում:

13. ՄԵԱԽՈՏԻ ԶՐԵԼԸ

Ծխախոտի ջրելը կախված է կլիմայական պայմաններից, հողի կազմից և բույսի պահանջից: Ուշ բնականից խոնավ և անձրևային տեղերում, ինչպիսին Սուխումի շրջանն և Սևծովի ափերը, ծխախոտը ջրելու կարիք չունի, առանց ջրելու ել նա լավ է աճում:

Չոր կլիմայում և հողեւ պինդ կազմ ունեցող տեղերում, ինչպիսին Արարատյան գաշտավայրն ե, նա. ջրելու կարիք ունի:

Շիթիլը տնկելուց 3—4 որ հետո անպայման հողը պետք է ջրվի: Այդ առաջին ջուրը կոչվում է ծխախոտին հոգի տվող ջուր, չի կարելի հետաձգել: Առաջին ջրից հետո 5—8 որը մի անգամ պիտի ջրել (յեթե պահանջի կա), վոր արմատները խորը մտնեն, աճելիությունը արագ կատարվի: Յերկրորդ ամսվանից յերբ թուփը բավականին բարձրացել ե, աերնակալել, ջրելը պիտի պակասեցնել 20 որը մի անգամ, իսկ յերբ տերեւները սկսում են հասունանալ և առաջին քաղը սկսվում է՝ ջրելը պիտի գաղարեցնել: Իրբե կանոն պիտի ընդունել, վոր ծխախոտը ջուր և պահանջում, յերբ թփերի վրայի տերեւները առավոտյան 8—10 ժամին թուլացած կախ են ընկնում, իսկ յեթե տերեւները կեսորվա շոգերից են թուլանում, այդ չի նշանակում, վոր բույսը ջրի պահանջ ունի: Շատ ջրելու գեպքում տերեւները շատ են խոշորանում, ջղերը հաստանում:

կոշտանում, թույլ ծխախոտ և ստացվում է արժեքն ել կրցնում:

Զրելու համար շարքամեջերում պետք է առուներ բանալ, ինչպես և տախտակների կողքերի կողքերին:

14. ՔԱՂՋԱՆԸ ՅԵՎ ՀՈՂԸ ՓԽՐԱՑՆԵԼԸ

Եթիլը փոխադրելուց հետո նրա գլխամոր խնամքը մոլախոտերի քաղհանն է, հողը փխրացնելը և հարկավոր դեղքում, միջատներից պաշտպաննելը և հիվանդություններից բժշկնելը:

Ամենից կարեվոր աշխատանքը քաղհանն է. մոլախոտեր վոչ միայն խեղդում են ցանքը, խում թփերի լույսը, սնունդը, այլ և ծըծում են ծխախոտի աճման համար անհրաժեշտ խոնավությունը և հողը չորացնում: Այդ պատճառով հենց վոր մոլախոտեր յերեվացին, քաղհան դործիքով, ձեռուրազով պիտի նրանց տնօպայիման հեռացնել, հողը փափկացնել և թփերի բուկը լցնել: Քաղհանը և փխրացնելը պիտի կատարել ջրելուց կամ անձրևներից հետո, յերբ հողը քիչ չորացել և կալչուն չի:

Աշխատանքը պետք է կատարել որքա տաք ժամերին, այն է, ժամը 10-ից մինչև 4-ը, յերբ ծխախոտի տերելիները թուլանում են և դիրք չելուց չեն կարատվում կամ պատառութում:

Առաջին քաղհանը պետք է կատարել շիփիլ փոխադրելուց յերկու շաբաթ հետո: Շարքամեջերը փորելու և քաղհանելու համար չառուկ դործիքներ կան:

15. ՄԱՂԿԵՓՆՁԵՐԻ ԿՏՐԵԼԸ ՅԵՎ ԽՈՐԹՈՒԿՆԵՐԻ (ՊԻՃԵՐԻ) ՀԵՌԱՑՆԵԼԸ

Ծխախոտի ամեն մի թուփ, նայած տեսակին, վորոշ քանակությամբ տերեներ տալուց հետո այլևս չի աճում և բարձրանում: Մովությար տերեները լինում են 10—25 հատ և ավելի: Այդ ժամանակ թփի գլխին ծաղկի փունջ է կազմվում, վորը սկսում է բացվել շիթիլը տնկելու որից հաշված ժույքը բարեկա ամիս հետո: Թփի գլխի ծաղկափոնջը հենց վոր կազմվում է, վերեկի տերեների դողիկներից սկսում են կողմնակի շիփեր, խորթուկներ գուրս գալ, վորոնք հետզհետեւ դարձանալով, անենում են 2—10 տերեկ և իրենց կողմից նույնպես ծաղկում են և նոր խորթուկներ առնելու: Դրանցից և ծխախոտի գլխի ծաղկի փընթերից բույսը թուլանում է, տերեները լավ չեն դերձնելու բանի վոր նրանք բույսի պիտի քաղաքանակում, քանի վոր նրանք բույսի պիտի քաղաքան տերեների սնունդը խլում են: Առաջնական համար խորթուկները և ծաղկափոնջները պիտի կտրել:

Յեթե ցանկանում են թույլ ծխախոտ ունենալ, ծաղկափնջերը թողնում են մինչև ծաղկել բացվելը և սերմի կոճակ բոնելը: Իսկ յեթե ուզում են մուգ գույն և թունդ ծխախոտ յեթե ուզում են մուգ գույն և թունդ ծխախոտ անենալ, այդ դործողությունը կատարում են գաղ: Տրապիզոնը, առաջանոր յեթե ուզում են, վոր բաց գույն ունենան, թփի գլխները պիտի կտրել լավ ծաղկած ժամանակը:

Թփերի գլուխները կտրելու և խորթուկները հեռացնելու մյուս առավելությունը այն է, վոր ծխախոտը շուտ և հասնում, տերենները լավ են զարդանում, ավելի բերք տալիս։ Բացի այդ դլուխները կտրած և խորթուկները հեռացրած ծխախոտի թուփը յերաշոից այնքան չեղասպամ և շուտ հավաքվելով, ցրատհարության չի յենթարկվում։

16. ՏԵՐԵՎՆԵՐԻ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՎ ՔԱՂԸ

Ծխախոտը սկսում է հասնել չիթիլը արևկելուց 50—60 որ հետո, յերբ սկսում են ծաղկի կոկոնները յերեալ։ Հասունությունը սկսում է թփի ներքեվի տերեններից։

Խոր. Հայաստանում մայիսի վերջին անգամ շիթիլը սկսում է ծաղկել հունիսի 20—30-ին. լավ պայմաններում բոլորովին հասնում է և քաղվում և սեպտեմբերին։

Ժամանակից առաջ չհասած տերենը քաղելուց, խոնալ յեղանակին վատ և չորտնում, խոնագություն ծծելու հատկություն ստանում, վորից զարնանը խմորման ժամանակ նաև սեանում է կամ փառում։ Այդպիսի ծխախոտը չորացնելուց հետո վոչ լավ դույն և ունենում են վոչ ել անուշ հոտ։

Հասունությունը անցրած ծխախոտի տերենները չորացնելուց հետո հարկավոր ձկությունը չունեն, նրանք շատ փշքվում են

կտաղուկներ շինելուց ծիշտ և, հասունությունը անցրած ծխախոտը չորացնելուց հետո պատճառ կարծիք դույն և ստանում, բայց վորակով ցած և լինում։ Թփի ներքեսի տերենները մի թեժ զիտափ քաղել, վորապեսզի չափից դուրս բաց, դույնը թռած ծխախոտ չըստացվի։ Թփի վերեսի տերենները ընդհակառակը թողնում են, վոր լավ հասնեն, վորապեսզի մուգ դույնով ծխախոտ ստացվի։

Ծխախոտի հասունության նշանը այն է, վոր տերենների մաքուր, մուգ կանաչ գույնը թռչում է, բաց դույն ստանում և նրանց վրա սկսում են զեղին բծեր յերեվալ, բացի այդ, տերենների ծայրերը սկսում են զեղնել և տերող տերեւը կարի և ընկնում կտսես թե թառամեկ է։

Տերեվների վրայի դեղին փոքրիկ ուռած քծերը հասունության լավ նշանն է, իսկ կատարյալ դեղնությունը՝ ընդհակառակը հաւանությունը անցած լինելու ապացույց է։

Թփի ներքեսի տերենների վրա բծեր չեն ցերեվում գրանց պիտափ քաղել, և ենց վոր տերենները սկսն քիչ զեղին դույն առնել։

Տերեվաղը սկսում են վագ սուավոտից թինչն յերեկո, բացի այն ժամերից, յերբ տերենները դեռ թաց են ցողից կամ ստատիկ տարենները դեռ թաց են ցողից կամ ստատիկ տարենները են, կամ ընկել։

Ծխախոտը չպիտի քաղել նաև յերկարատես անձրեններից հետո անմիջապես, վորով հետեւ անձրեններից տերենները շատ խօնաւ

վություն են ծծում, հյութալի գառնում, կարատվում և թե տերեվներից լվացվում տարվում են րանց ծածկով յուղային—մածուցիկ հյութը:

Թաղած տերեները, միատեսակ հասունություն պիտի ունենան, վոր միատեսակ ծխախօս ստացվի:

Թփի ամենացած տերեները—յետնաթերք (դիբսարը) միանգամից են քաղում՝ 2—5 հատը միասին: Յետնաթերք հետո քաղում են երանից վեր հասած տերեները—միջնատակը (խաշաման) 4—6 տերե, հետո միջնաթերք (կանաչը) հետո վլխատակը (դրուգալթին) և վերջը գլխաթերք (դրուգը):

Թփից քաղած տերեները մեկը մյուսի վրա կարգին դարսելով զնում են շարքերում թփերի առակ, վոր արեկից չտաքանան: Մի շարքը մերջացնելուց հետո բանվորը իր քաղած տերեները հավաքում է, շարքից դուրս բերում՝ վորտեղից վերցնում են ուրիշ բանվորներ, շայակով կամ սայլով չորացնելու տեղը փոխադրում: Քաղի ժամանակ պիտի հետևել, վոր թփերի վրա հասած տերեներ չմնան: Յեղափոխության ժամանակ պիտի հետևել, վոր ծխախոտի կոթերը դեպի դուրսը լինեն, վոր տերեները շփումից չվնասվեն և ծածկված լինեն չորով կամ խոտով:

Թե քաղի ժամանակ, թե թեև շարելիս՝ թփի ներքեվի տերեվները չպիտի խառնել նըրանից վերև դանվողների հետ և ամեն մի որ-

վա քաղածը պիտի առանձին-առանձին գնել և նշանակել որը:

17. ՏԵՐԵՎՆԵՐԻ ՏՄԿԱՑՆԵԼԸ ՅԵՎ ՔՈՂԻ ԱՆՑԿԱՑՆԵԼԸ

Տերեներին լավ գույն տալու համար շեղված զնում և տմկացնում չորացնելու շենքին կից հարմար տեղում: Տերեները զնում են 10—15 հատը միասին զետնին փոած կակուզ և չոր ծղոտի վրա, կոթերը դեպի ներքն, տերեի ծայրերը գեղի վեր և յերեսները պատի կամ տախտակի կոթնած: Մի շարքը զնելուց հետո, մյուս շարքեցն են զնում և շորով գլուխը ծածկում շարքեցն մինում թելի անցնելու 2—3 որից, յերբ տաքանալուց զեղնավուն գույն են ստանում: Զպետք և տերեների կոթերը զեղի վեր զնել տմկացնելուց, դրանից ծայրեների ծայրերը ճիրվում ծանրության տակ, ճիլված տեղերը սեվանում, ծայրերը չուտ են զեղնում, քան կոթերի կողմերը:

Քաղի անցնելուց սկզբան դեղնածները, կանաչ մնացածները, մանր և մեծ տեսակները, փչացածները ջոկել և տոանձին-առանձին քողի փչացածները ջոկել և տոանձին-առանձին քողի փչացածների թիւում ծխախոտը անցկացնել: Յեթե ցանքատեղում ծխախոտը մի տեսակի և և քաղը կանոնավոր և իր ժամանակին ե կատարվել, հարկ չկա քողի անցնելիս տեսակների խիստ բաժանում կատարել, բավեկան կլինի անպետքները միջից հեռացնել կամ կանաչ մնացածները նորից տմկացնել:

Քողի անցնելու համար պետք և ունենալ 5—6 վերշուկ յերկայն ասեղ, վորի վրա 15—20

աերի անցնելուց հետո, քաշում ևն քողի վրա : Քողի յերկայնությունը կախված է չորացնելու քջանակների (վագոնների) լայնությունից, իսկ շրջանակների լայնությունը սրահի կամ չորացնելու շինության սյուների միմիանցից ունեցած հեռավորությունից : Առհատարակ շրջանակները լինում են 4—5 արշին յերկույն, բայց ամենահարմարը 4 արշին լայն է 3 արշին յերկար շրջանակներն են, վորոնք հարմար են տանել բերելու և բարձրացնելու համար : Քողը պետք է շրջանակի լայնությունից $\frac{1}{2}$ արշին յերկար լինի, վոր ազատ ծայրերը շրջանակի մեխին կապվի :

Տերեները քողի անցնելուց հետո առնում են շրջանակների վրա կախում, ուղղում տերեները մեկ-մեկ և նրանց արանքներում տերելի կոթի հաստությամբ ազատ տեղ թողնում :

18. ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՇԵՆՔԸ

Կոլխոզները, արտելները պետք է չորացնելու հարմար շենք ունենան, վոր քամի, անձրե կամ ամպ որերին ծխախոտի շրջանակները (վագոնները) մեջը տեղափորեն : Շենքը պետք է արեի լույսին յենթարկվի, նրանից տաքանա և մեջը թարմ, չոր ող խաղա : Շենքը պիտի ունենա ծխախոտը տմկացնելու, քողի անցնելու, կապոցներ շինելու, հաղանդներ կախելու, հակեր կապելու հարմարություններ :

Հասարակ չորացնոցներ կարելի յե շինել տափակից, քարից, աղյուսից, յերեսը սվաղած դամիշից . յերեք կողմը և զլուխը ծածկած : բարձրությունը պիտի լինի յետեկի պատին 8 արշին, մեջ տեղը ընկած սյուներին 7 արշին և դրսի, հարավային կողմն ընկած սյուներին՝ 6 արշին, վոր թեք դիրք ունենա, յեթե կտուրը զախով ծածկված և դարմանացեխով սվաղած է :

Լավ է չորացնոցը յերկհարկանի լինի, վերևսի հարկում հավանգներ կախելու և կապուկներ շինելու համար :

Յեթե յեղանակը տաք է, անձրելից յերկայուղ չկա, շրջանակների վրա անցրած ծխախոտը կարելի յե գիշերները ևս տեղում թողնելի, իսկ ամպամած և անձրեային որերին չօրանոցի տակը հավաքել : Զորանոցի մեջ շրջանակները դիք են դնում, մեկ-մեկի կողքին, վոր քիչ տեղ բանեն :

Շրջանակները գրառում դնում են չենքի առաջ ամեն յերկու սյուների ուղղությամբ գետնի մեջ խփած և մի արշին բարձր սյուների վրա պնդացրած մոտ 2 վերշոկ հաստություն ունեցող ըեյկաների վրա :

19. ԶՈՐԱՑԱԾ ՏԵՇՎՆԵՐԻ ՔՈՂԵՐԸ ՎԵՐՑՆԵԼԸ, ՆՐԱՆՑ ՊԱՀՊԻՆԵԼԸ, ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՊՈՒԿՆԵՐ ՇԻՆԵԼԸ

Շրջանակների վրա արեւով չորացրած և դավ գույն ստացած տերեները շարանով հա-

նում են մեխերի վրայից, քողի յերկու ծայրերը միացնում, կեռ փայտիկից կապում և չորացնելու շենքին կից կամ վերևի հարկում կախում. այդպիսի շարաններին հավանագ էն ասում, դրանց պահում են մինչև հոկտեմբեր, ոոյեմբեր, յերթ սկսում են նրանց տեսակների բաժանել և կապուկներ շինել:

Հավանգները շատ չոր լինելու պատճառով
կարող են մի փոքր շարժվելուց փշրվել, այդ
դեպքում կամ փոխադրում են հատուկ ներք-
նատուն, կամ դուռ ու պատռհան բանում են,
վոր ող խաղաղ դիշերը, քիչ խոնավություն ծր-
ծելով, տերեւները թուլանան։ Ծխախոտի տե-
սակավորումը և միաժամանակ կապուկներ
շինելը կատարում են աշնանը քաղից և չորտց-
նելուց հետո։ Այդ աշխատանքը կարելի յէ կա-
տարել նաև ձմեռը և զարնան սկզբներին։ Շատ
խոնավություն ստացած հավանգները առաջ
պետք ե քիչ չորացնել, իսկ շատ չորերը ներք-
նատան մեջ կախել, հատակի վրա թաց ավագ
կամ թաց ծղուտ փռելով, վոր խոնավացնի
ներքնատան ողը, այն դեպքում, յեթե հա-
վանգների տեղը շատ ցուրտ է և խոնավ, տու-
քացնում են։

Տեսակավորումը հմուտ վարպետների գործն է. նրանց ցուցմունքներով՝ պիտի աշխատեն բանվոր-բանվորութիւնները, կապուկներ շնորհուած Համար վերցնում են 20—30 տերեններ, կոթերը յեղիքատացորենի սպիտակ փաթեթի կակուզ մասերով կապուտում, այդ կապուկնե-

ըս մի արշին բարձրությամբ յերկու շարքով
դնում են, կոթերը դեպի դուրսը և վրան տախ-
տակ կամ ծանր բան դնելով պահում, մինչեւ
գարնանը ինքն իրեն տաքանալով նորից խմոր-
վում է: Կապուկները կարելի յեւ և հակերում
պահել և շաբաթը մի յերկու անգամ հակերը
բանալ, յեթե մեջը խոնավ տերեկներ կան կամ
փչացած, հեռացնել:

Ամորման ժամանակ հակերը պահում էն
վոչ սովորական դիրքով, այլ կանգնեցնում են
կոթերի վրա և շաբաթը մի անգամ շուռ տա-
յիս:

Արդեն սպատքաստի ծխախոտը 2-2½ փ.
հակեր շինելով ուղարկում են ծխախոտի գոր-
ծարանը, վրան նշանակելով ծխախոտի տեսա-
կը և նրա քաշը:

20. ԾԽԱԽԻՌԻ ՎՆՍՍՍՏՈՒՆԵՐԸ

Он же виноват в том, что он не может употреблять табак, потому что он болен. Он не может употреблять табак, потому что он болен.

1. Տրիպու, վորին պատուզա անունն ել են
տալիս, ամսվա ընթացքում Յ սերունդ տա-
լով, շատ բազմանալով համախմբվում են ծը-
խախոտի տերեւների մեջ և նրա կողքերի զղե-
րի վրա, ծծում նրանց հյութը, դրանից ծխա-
խոտը կորցնում ե իր արժեքը:

Տրիպսը բաղմանում և չորային լեզանտակին և այն դեպքում յերբ ծխախոտը գոմաղբով պարարտացրած հողում և տճռում։ Առաջը առնելու համար վերցնում են մախորկա կամ ծխու խոտի փոշի 1 Փ. 1 վեղը ջրին. յեփում 30-40 րոպե, հետո այդ հեղուկով ծխախոտի ցանքու յերեք անգամ սրոկում, 10-16 ժամ միջոց տըլած։ Սրսկումը կատարում են մայիսի վերջին, Տրիպսի յերելցած ժամանակին։

Տրիպսի թրթուռների վրա ավելի յամ ներդործում է և կերոսինը. վերցնում են $1\frac{1}{2}$ շտոփ ջուր, 4 Փ. սապոն և $1\frac{1}{2}$ շտոփ կերոսին։ Առաջ սապոնը լուծում են, հալեցնում ջրի մեջ և հետո կերոսինը վրան ածելով այնքան խառնում, հարում, մինչև վոր ստացվում և մի սպիտակ հեղուկ թթվահերի թանձրությամբ։ Այդ կաթնակերպ հեղուկի մի մասին 24 մաս մարդուր ջուր են խառնում, վորով 2% կերոսին և ինում և դրանով սրսկելով, կոտորում են թրթուռներին առանց ծխախոտին մնանալու։

Յեթե Տրիպսը ծխախոտի թփի ներքեի տերենների վրա նկատվի, պիտի տեղենները պոկել փչացնել։

2. Աշնանավորդը ծխախոտին շատ մեծ վրանա տվողներից մեկն է, եղ թիթեռները 200 մանր ձվեր և դնում ծոլախոտերում 5-12 որից դուրս են գալիս թրթուռները, առաջ ապրում են այդ խոտերի վրա, հետո անցնում ծխախոտի, ճակնդեղի, յեղիպտոցորենի ցանքսերի վրա և դրանց վնասում։

Աշնանավորդերը խթուռմ են գետնի յերեսի տերենները, կրծում ցողունը, վորից ծխախոտի թուփը թառամում և, աճելությունը կանգնում է վերջը փշանում։

Զափահաս թրթուռները աննդվում են միայն գիշերը, իսկ յերեկը թաղնվում են հողի մեջ։

Առաջն առնելու համար պետք է քաղհանել բոլոր մոլախոտերը մինչև թիթեռների լույս ըուլոր մոլախոտերը մինչև թիթեռների լույս ըանկնելը, թե ցանքատեղում, թե միջնակներում և թե ցանքատեղի շուրջը։

Աշնանավորդը կարելի յե փչացնել և թուռնավոր գրաւչանյութով։ Դրա համար վերցընամ են մի փութ ցորենի թեփ, 1 կամ $1\frac{1}{2}$ ում և մի փութ ցորենի թեփ, 1 կամ 2-3 Փ. բեքմեղ 1 վեղը Փ. Փարիզի կանաչ, 2-3 Փ. բեքմեղ 1 վեղը Փ. Փարիզի կանաչ, 2-3 Փ. բեքմեղ 1 վեղը Փ. Փարիզի կանաչը ձգում, խառնում, թեփի վրա ածում քիչ քիչ և անհում մոլախոտերի վրա փոռում։ Փարիզի կանաչը թույն լինելով, պետք անառուններին հեռու պահել և ամեն աշխատանքից հետո, ամանները մի քանի անգամ լվանալ, ինչպես և ձեռքներ

3. Ծխախոտի վոչիլը։ Ամառվա ընթացքում մի քանի անգամ սերունդ և տալիս, առաջին մի քանի անգամ սերունդ տնթեւ է, մնացյալները թեավոր։ Սերունդը տնթեւ է, մնացյալները թեավոր։ Նրանք ծծում են վոչ միայն ծխախոտի տերենները, և արժեքը կորցնում, այլև նրա մեղրանցութիւ վրա թրթուռները թողնելով իրենց հյութի վրա թրթուռները թողնելով իրենց ծորթը, մի առանձին սունկ և առաջ գալիս, վոր սեացնում և տերենները։

Վոշիլը կուտրելու համար սրսկում են վերոհիշյալ ճարերը, և տերեւաքաղից հետո կրակում են դաշտում թողած թփերը:

21. ՍՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Սնկային հիվանդություններից Մողայիք հիվանդությունը յերեւում է շիթիւը ցանքատեղը փոխադրելուց 2-3 շաբաթ հետո, թեև յեղել են դեպքեր շիթիւանոցում ևս յերեւալու: Հիվանդության նշանները կայանում են նրանում, վոր տերեւները փոխանակ կանոնավոր կանաչ գույն ունենալու, վրան յերեվում են բաց կանաչ կամ դեղնավուն տեղեր, վոր միանալով կազմում են մի մեծ մողայիք նկար, իսկ կանաչ բնական գույնը մնում է միայն ջրդերի յերկարությամբ: Հիվանդ տերեւները միանում են, դարչինի գույն ստանում: Մողայիք հիվանդությունը սաստիկ զարդանալուց թփի վերեի տերեւները փոխում են իրենց ձեր և ծայրերը սուր նշտարի ձև առնում: Վարակված տերեւները անպետք են, խմորմելուց (տմկացնելուց) նրանք փշրվում են:

Այդ հիվանդության առաջն առնելու համար լավ է ցանքատեղում կիր, վոսկրափոշի, կամ թումաս շլաք շաղ տալ:

Նոր գոմաղբով չպիտի պարարտացնել և վոչ ել խոնալ տեղերում ցանքս անել:

բ. Զեջուությունը ծխախոտի վտանգավոր հիվանդություններից մեկն ե. նա յերեվում և հունիսի կեսին տերեւների վրա, բազմաթիվ

կլոր կամ անկյունավոր բծեր դնելով, վոր հետզհետե միանալով ճերմակ կամ զարչինի գույն և ստանում: Հիվանդությունը սաստիկ զարդանալուց, ամբողջ տերեւը լցվում է բըծերով և վերջը ծակծկվում, չորացնելու անպետք դառնում և արժեքը կորցնում:

Հիվանդության պատճառը համարում են ցանքատեղի խոնավությունը, վոր հանկարծ փոխվում, զոլորշիանում և շոգերի պատճառվ և տերեւները զրկվում են ջրից:

Ուժասպառ հողը ևս ազդում է հիվանդությունը զարդանալուն:

Զեչտության առաջն առնելու համար հողը պետք է փուխր պահել, ջրել իր ժամանակին, վոր խոնավությունը անպակաս լինի և ցանքատեղը աշխանը հերկվի:

գ. Նուռ գալը կամ տերեւների սփրբնելը յերեվում է բարձր տեսակի ծխախոտների վրա: Տերեւները սկզբում սփրթնում են, հետո դեղնում, լայնությունը կանգ և առնում, իսկ յերենում, ձգվում նշտարի ձև առնում: Հիվարությունը թեև թառամածի տեսք և ունեցանդ թուփը թփի թուփը և ապրել մինչև աճենում, բայց շարունակում է ապրել մինչև աճենում, բայց շարունակում է ապրել մինչև աճենում, բայց տերեւները անպետք են լության վերջը, բայց տերեւները անպետք են դառնում:

Շուռգալի դեմ պիտի դիմել հետեվյալ միջոցներին՝

1. Ցանքատեղը պարարտացնել.
2. Հիթիլը փոխադրելուց առաջ նորից չերկել, մաքրել.

Յ. Մինույն տեղում շարժակ ծխախոռ
ցանի.

4. Թվին արանքները և չորս կողմը հոգը
փռված պահել:

Դ. Բայրուշը. այդ անունը տալիս են այն
հիվանդ տերեններին, վորոնք նկատվում են հա-
սունության միջոցին, թեև թփերի միջին և
վերևի տերենները հասունության առաջին նր-
շանները յերեալուց հետո նրանց վրայի բծերը
ավելի յեն աչքի ընկնում և դեղնականաշավուն
դույնից տեղնափուն-ծերմակ դառնում կամ
ճերմակում։ Բայզուշով՝ հիվանդ տերենները
չորանալուց, կարմիր գույն են ստանում, ձեռ
ալուց յուղոտ են, ընդունակ խոնավություն
ծելու և փշրվելու։ Կապուեկներ շինելուց տե-
րեններ կպչում են իրար հետզհետե մղանում
իսկ գարնան խմորման ժամանակ սեանում։
Եեթե այդպիսի տերեններ շատ ե լինում հակի
մեջ, ամբողջ Հակը կարող է փշանալ խոնա-
վություն ծելու ընդունակության չնորհիվ։
Հիվանդ ծիախոտը վատ հոտ ունի, կոշտ է և
վատ է ալրմում։

Հիւլանդության պատճառը համարում են հոգի մեջ կալիական նյութերի պակասությունը և խորհուրդ են տալիս կալիով պարարտացումը և միենալույն տեղը ծխախոտ չցանելը:

Բացի վերոհիշյալ հիմնդությունները
կան և մի շարք սնկային հիմնդություններ,

վոր գեռ լավ ռասումնասիրված չեն և հայտնի չեն մեզնում, Անդրկովկասում:

22. ԲԱՐԵՎԱՆ ՀԱՐՎԱԾԻ ԵՐԵ—ԿԱՐԿՈՒՏԸ,
ՑՇԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բնության հարվածներից կարկտի տվյալ
վնասը ավելի զգալի և քան քամիներին, հե-
ղեղներին։ Կարկուտը կարող է մի լերկու բո-
պելում փչացնել ամբողջ ցանքը. կարկտից
ծակծկվում են, ճղճղվում տերեները և կորցը-
նում իրենց արժեքը ծխախոտի հոսունության
ժամանակը խփելուց, այլև դժվար են նրանից
վորեն շահ ստանալ։ Յերբ կարկուտը խիռում է
ծաղիկները դեռ չբացված ժամանակը, կարե-
լի յե շատ—քիչ ողուտ քաղել, յեթև հետեւյալ
միջոցները ձեռք առնվեն. այն եւ ա. ցողունի
վերիկ մասը կարել մինչև այստեղ, վորտեղ
տերեի և ցողունի արանքում ապագա շիլի-
հետք կա: բ. Հեռացնել բոլոր փչացած տերեւ-
ները: դ. Պահել վերիկ խորթուկներից 2-3-ը,
մնացածը փչացնել: դ. Հողի յերեսից դուրս
իեկած շիմերից մի զորեղը պահել:

Կարկտի առաջն առնելու Համար այս
գործադրում են բակետներ:

Յրուահարության դեմ, զոր պատասխան աշխանանը, կարելի յէ ցանքատեղում աթար, տառաշխանը, գոմաղբ վառել, յերբ առավոտյան ցըրտությունը հասել ե 2-3 աստիճ. ծուխը պաշտպանում ե ցանքատեղը գրտահարվելուց:

23. ՆՈՐ ՏԻՊԻ ԶՈՐԱՆՈՑՆԵՐԸ ՅԵՎ ԼԱՐԸ
ՇՊԱԳԱՏԻ ՏԵՂ

Այս չքջանները, վորտեղ ամառը չող ե,
շատ անձրևներ չեն տեղում և տնտեսություն-
ները միջոց չունեն քարաշեն չորանոցներ շինե-
լու, պիտի նոր տիպի չորանոցներ չինեն, վորը
թե մեծ ծախք չի պահանջում և թե շատ քան-
վոր կամ աշխատանք: Նոր տիպի չորանոց շի-
նելու համար ընտրում են հարթ տեղ, մի արշին
խորությամբ ոյուներ տնկում յերեք չորս շար-
քով մեկը մյուսից մի սաժեն հեռավորության
վրա ուղիղ զուգահեռական գծով, արեւելքից
արևմուտք, այնպես վոր ուղղանկյուն են կազ-
մում 10-20 սաժեն յերկարությամբ, իսկ լայ-
նությունը կախված ե շարքերի թվից, վոր
մեկը մյուսից 2 արշին 4-6 վերշոկ հեռավորու-
թյուն ե ունենում: Դրսի չորս կողմի ոյուները
հասան են քան ներսի կողմին. նրանք 3-4 վերշոկ
հաստություն ունեն, այնինչ ներսի ոյուները
2-2½ վերշոկ:

Բարձրությունը կախված է բերքի քանակից: Պիտի այնպիսի բարձրություն տալ, վորչնարավոր լինի 8-10 և ավելի շարաններ անցնել յերկու սյունի վրա: Այդ սյուների վրա լավ հղիած գերաններ են պնդացնում և նրանց վրա բրեղինտ փոռում և այնպես հարմարեցնում, վորցերեկը կամ գիշերը ցանկացած ժամանակը կարելի լինի քաշելով կտուրը բանալ կամ ծածկել:

Բրեգենտը վերցնում էն վոչ շատ ծանր և
հասաւ պարուախից շինած, կանեգի ձեթավ
թրջված 5-10 սաժ. յերկարությամբ, իսկ
լայնությունը այնպես պիտի լինի, վոր հեշտ
քաշվի և թե կտուրը ծածկելուց կողքերը բաց
չմնան: Քամիներից պաշտպանելու համար ո-
ղակներ, կեռեր պիտի ունենան և պարաներ՝
կապելու, քաշելու: Անձրկից, քամիներից
պաշտպանելու համար կողքերն ել ծածկում
են բրեգենտով:

Քաղած տերեւը ամկացնելուց հետո շաբաների վրա անցնելով՝ բնը ուժ կապում էն ոյունեցի վրա պնդացրած մեխերին և առանց տեղահան անելու, թուլում թիսչն չորանալը և հավանագներ շինելը։ Այդպիսով թե ամեն որ արեի տակ հանելը և յերեկոյան ներս թերելու աշխատանքն է կրծառպում, տերեները չեն պնապում, թե վագոնների շրջանակների ծախսը է կրծառվում։

Ծխախոտի տերեները վոչ միայն կարելի
յի քողի շաղագատի վրա անցկացնել, այլև լա-
րերի (մաֆթուլների), վորոնք թեև թանգ են
նստում, բայց յերկար դիմանալով, իրենց
ծախքը հանում են. այսինչ շաղագատը 2-3 տա-
րի ե դիմանում: Լարերը պետք ե բարակ լինեն
/_{1/16} մասը վերշոկի, 4 արշ. շրջանակների հա-
մար լարը պետք ե վերցնել 2 վերշոկ ավելի,
մեխերին պնդացնելու: Տարելու համար առեղի
պետք չկա, լարի մի ծայրը սրում են, ձեռքում

պրահում, մյուս ծայրը հաստակի կամ պատի
Արտ պնդացնում և տերեց անցկացնում:

Լարերի վրա անցկացրած տերեները շու-
տով են չորանում և այնպես չեն կաւզուչու-
ում, ինչպես քողի վրա:

ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ՑԵՎ ԻՆՉ ՄԱՒՔԵՐ ԿԱՆ ԾԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ

1. Պետք է մի հեկտար տեղի համար $\frac{1}{2}$ -1
ֆունտ սերմ ունենալ:
2. Ցանքսատեղը աշնանը գութանով հեր-
կել, վոր ծախք կնստի 10-15
3. Գարնան հերկը յերեսանց 7-12
4. Փոցխելը և տափանելը 3-5
5. Շարքերի նշանելը 1-2
6. Շիթիլանոց շինելը 12 արշին յեր-
կայն, 2 արշին լայն, 1 արշին խոր
փոս փորելը, գերանների, տախ-
տակի 50 ռուբ., հինգ տարի դի-
մանալուց-տարեկան 10
7. Շրջանակները 6 հատ $2\frac{1}{4}$ արշին
յերկայն, $1\frac{1}{2}$ արշին լայն, 4 ա-
պակիներ ձգած ամեն մի շրջա-
նակը 8-10, ընդամենը 48-60 ռ.
հինգ տարի դիմանալու դեպ-
քում 9,6-12

8. Խսիրով կամ դամիչով շինած
ծածկոցները շրջանակները ծած-
կելու տարեկան 2-3
9. Շիթիլանոցը հողով, գոմաղբով
լցնելը և այլ աշխատանքները 10-15
11. Շիթիլանոցի հսկողությունը
ջրելը, քաղհանելը, ծածկելը 10-15
12. Սերմի, ցնցուղների, վեղրի,
գույլի, տակառի, ասեղների,
մեխի և լուսավորության 50-60
13. Շիթիլի տնկելը, մի բանվորուհի
կարող է որական մինչև 3000 շի-
թիլ տնկել 30 որդա վարձ 30
14. Մոլախոտերի հեռացնելն ու թը-
փերի տակ 2 անդամ փխրացնելը
մի հեկտարին 30-45
15. Զրելը 3-4 անդամ, 4-6 որդա
վարձ 6-9
16. Ծաղկափնջերի կտրատելը և խոր-
թուկները հեռացնելը, 5000 թափը
մի որում մի բանվորուհի, 80,000
թփի 16 որդա 16-24
17. Տերեվի քաղը, փոխաղբելը, քողի
անցնելը 120 բանվորի 120-180
18. Վագոնների վրա շարանները կտ-
պելը, ներս բերելը և արեվի տակ
հանելը 2 հոգու 2 ամսվա վարձ 120-150
19. Գիշերտակահի 3 ամսվա 60-90
20. Տեսակների բաժանումը, կտ-

պուկներ շինելը 10 ժամում 15-20
 ֆ. մի հեկտար տեղից 60 փոթ,
 120 որվա վարձ 120-150
 21. Շպազմատի ծախք, վորը կարող
 և դիմանալ 2-3 տարի 16 կի-
 լո 20-30
 22. Մի մասնագետ վարպետի 1200 ռ.
 տարեկան, 10 հեկտարի նայելու .
 մի հեկտարին 120
 23. Մի սպանակնի 600-750 ռ. տո-
 րեկան, մի հեկտարին 60-75
 24. Հակ կապելը, փայտիկներ, դոք
 և մանր ծախքեր 200-300
 Թաց 8-9 փոթ տերելից ստացվում է
 1 փոթ 10 ֆ. կամ 1 փ. : 15 փոթ չորը կամ
 թացի մեկ վեցերորդ մասը:
 Մի հեկտար տեղից լավ խնամքի ժամա-
 նակ միջին հաշվով կարելի յէ ստանալ առա-
 ջին տեսակի ծխախոտ՝ 40 փոթ, յերկորդ
 և յերրորդ տեսակի 20-30 փոթ և ավելի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ՑԷՐԿԱ
Ծխախոտի մշակությունը. առաջարան	3
1. Ինչպիսի հողեր են պետք ծխախոտի մշակու- թյան համար	6
2. Ցանքաշրջանառություն	7
3. Հողի հերկը	8
4. Ծխախոտի հողի պարարտացումը և պարա- րտանութերի բանակը	8
5. Սերմի ընտրությունը, մի դիսյատին տեղի վրա շիրիների և սերմի բանակը	11
6. Շիրիլանցների տեղը	12
7. Սերմի ցանելը և շիրիլանցի խնամքը	14
8. Շիրիների պարարտացնելը	15
9. Շիրիլանցի վճառասաւմները	16
10. Շիրիլի հիվանդությունները	17
11. Ցերք պետք և շիրիլը փախադրել	19
12. Ինչ հեռավորության վրա շիրիլը դնել	20
13. Ծխախոտի ջրելը	21
14. Քաղիանքը և հողի փխրացնելը	22
15. Ծաղկափնջերի կտրելը և խորքակների հե- ռացնելը	23
16. Տերելյների հառամարթյան ժամանակը և բա- ռելը	24
	45

17.	Տնրեվների տմկացնելու և բռնի անցկացնելը	27
18.	Զորացմներու շեմքը	28
19.	Զորացած տերեվների տեսակավորումը և կապուկներ շինելը	29
20.	Խլախոսի վնասառումները	31
21.	Սնկային հիվանդությանները	34
22.	ԲՅՈՒ.Պ.Յ.Ա. հարվածները, կարկուոր, գրտահարությունները	37
23.	Նոր ախայի չորացները և լարը	38

19.393

64-

нр 1
ар 1

ԳԱՅ 8 ԿՈԴ.



К. К. Мелик-Шахназарян

Табаководство

